

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՕԹՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ»-Ի ՄԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԲՆԱԳԻՐ

Ուուգան Պողոսեան

Հայ միջնադարեան ձեռագիր ժողովածուներում ընդօրինակուած հին զրոյցների, պատմութիւնների կողքին մեծապէս արժեւորուել է նաեւ «Պատմութիւն եօթն իմաստասիրաց»-ը, որի հայերէն թարգմանութեան ամենավաղ օրինակը համարուում է Փարիզի ազգային գրադարանում պահուող ժէ դարի թիւ 307 ձեռագիրը: Սոյն յօդուածը գրելու շարժառիթը Մաշտոցեան Մատենադարանի թիւ 5882 ձեռագիրն է, որի գրիչն ու գրչութեան վայրն անյայտ են, ըստ հնագրական տուեալների, ընդօրինակուել է ժէ դարում: Այն սկսուում է «Պատմութիւն է. իմաստասիրաց եւ թագաւորին ֆռանկաց» բնագրով, որն անսպասելիօրէն փոխուում է հայերէն թարգմանութեան ժամանակի վերաբերեալ հայագիտութեան մէջ ընդունուած երկարամեայ կարծիքը:

Այդ ձեռագրին անգրադառնալուց առաջ նշենք, որ վերոնշեալ պատմութեան հիմքում ընկած է հին արեւելեան թափառող սիւժէներից մեկը, ըստ որի, թագաւորի կինը զաւակ լոյս աշխարհ բերելիս մահանում է, որոշ ժամանակ անց թագաւորն ամուսնանում է մեկ այլ կնոջ հետ, որը փորձում է խարդաւանքների միջոցով թագաւորի որդուն զրկել ունեցուածքից, սակայն թագաւորի եօթ իմաստասէրները կարողանում են մերկացնել կնոջ անբարոյ էութիւնն ու թագաւորի որդուն ազատել մահապատժից:

Այս պատմութիւնը լայն տարածում է գտել հին հնդկական առակների «Պանչատանթրա» (սանսկրիտ «հինգ գիրք») ժողո-

վածուից, որը կազմուել է Ք.ծ.ա. Բ. դարում ժողովրդական բանահիւսութեան հնագոյն նմուշների յենքի վրայ: Ք.յ. 2 դարում այն թարգմանուել է միջին պարսկերէն՝ «Քալիլայ եւ Դիմնա» վերնագրով, Ը դարում արաբերէն, իսկ աւելի ուշ՝ ԺԳ դարում թարգմանուել է լատիներէն՝ «Պատմութիւն եօթն իմաստասիրաց» վերնագրով, որից եւ ծնունդ են առել ֆրանսերէն, իտալերէն, գերմաներէն ու սլաւոներէն թարգմանութիւնները:

Հայերէն թարգմանութեան հարցն առաջին անգամ արծարծել է Լէոն՝ վկայակոչելով 1616 թ. ընդօրինակուած Վիեննայի Մխիթարեան մատենադարանի թիւ 140 ձեռագիրը¹: Նրանից յետոյ Հ. Ակիմեանը գրել է Փարիզի թիւ 307 ձեռագրի մասին, որի յիշատակարանում ասուում է. «ես Յակոբ երէցս Թոխաթեցի, որ եմ թոռանց Բաթուկենց, թարգմանեցի զգեղեցիկ պատմութիւնս ի լատինական գրոց ի հայ դիր, ի խնդրոյ վարժապետին իմոյ Թոխաթեցի տէր Յակոբին՝ որ ասեն Այվաթենց, թուին ՌԿԳ 1614 փետրուար ամսոյ ԺԳ, ի յերկիրն լեհաց, ի քաղաքն Ջամաւսցայ: Աղաչեմ զձեզ, յորժամ որ փոխարկէք, զանունս մեր մի յապաղէք գրել ի տեղիս խորագրոց եւ ասացէք թէ Աստուած ողորմի, ամէն»²:

Ուշագրաւ է այն, որ նոյն յիշատակարանը որոշ խմբագրմամբ առկայ է նաեւ 1696թ. ընդօրինակուած Փարիզի թիւ 309 ձեռագրում. «Թարգմանեալ եղև Պատմութիւնս օգտակար եւ շահաւէտ, որ կոչի եօթն իմաստասիրաց ի լատինական լեզուէ առ ի

1 Լէո, Հայկական տպագրութիւն, Ռ. Ա. Թիֆլիս, 1901, էջ 307-308:

2 Հ. Ակիմյան, Պատմութիւն եօթն իմաստասիրաց հայ գրականութեան մեջ, «Հանդէս ամսօրեայ», 1921 (9-10), էջ 475:

Հայ լեզուի խնդրոյ վարժապետին իմոյ Թօխաթցի տէր Յակոբին, ի յերկիրն Իլախաց, որ կոչի Զամօսչայ ի թուականիս Հայոց ՌԿԳէ, սակայն ի տարբերութիւն Փարիզի թիւ 307 ձեռագրի, այն կրում է «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի եւ կնոջն եւ որդոյն Դիոկղետիանոսի եւ եօթն իմաստասիրաց» վերնագիրը, որով մեզ են հասել բոլոր տպագիր օրինակները:

Հայերէն միւս ձեռագրերում Վիեննայի թիւ 140 (1616թ.), Բեռլինի ազգային գրադարանի թիւ 83 (1698թ.), Օքսֆորդի Բոդլէյեան գրադարանի թիւ 131 (1697թ.), Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 628 (ժէդ.), նշեալ յիշատակարանը չի պահպանուել: Առաջին տպագիր օրինակը լոյս է տեսել 1693 թուականին Կ.Պոլսում,

որից մի նմուշ պահպանուած է Երուսաղէմի Ար. Յակոբեանց վանքի Կիւլպենկեան մատենադարանում, այնուհետեւ տպագրուել է Լիվոնոյում 1696թ., Կ. Պոլսում՝ 1721, 1740, 1713, 1792, 1796, 1803, 1804, 1881, 1912, Մադրասում՝ 1790, Տփղիսում՝ 1857 եւ այլուր:

Այժմ անցնենք Մաշտոցեան Մատենադարանի թիւ 5882 ձեռագրին, որը Փարիզի թիւ 307-ից տարբերուած է ոչ միայն վերնագրով, այլ նաեւ կարմիր թանաքով գրուած քսանեօթ ենթավերնագրերով, սակայն բուն բնագրում թարգմանական տարբերութիւնները գրեթէ աննշան են, ինչպէս պարզորոշ երեւում է առաջին հատուածի համեմատութիւնից

<p>ՄՄ 5882</p> <p>Պատմութիւն Է. իմաստասիրաց եւ թագաւորիւն ֆուակաց</p>	<p>Փարիզի 307</p> <p>Պատմութիւն Է. իմաստասիրացն</p>
<p>Այր ոմն յորում անուն Փաւնցիանոս թագաւորեաց ի Հոռոմ քաղաքի, այր իմաստուն յոյժ, որ առեալ էր զգուստր արքային Հոռոմայ ի կնութիւն, գեղեցիկ յոյժ եւ հաճոյ մարդկան աշաց հայելոյ, վասն որոյ եւ սիրեցեալ եղեւ յաչս առն իւրոյ: Եւ յետ աւուրց յղացաւ կինն եւ ծնաւ որդի եւ կոչեցին զանուն նորա Դիոկղետիանոս, իսկ մանուկն Դիոկղետիանոս աճեալ եւ զարգացեալ եղեւ ցանկալի մարդկան:</p>	<p>Այր ոմն Փաւնցիանոսանուն, որ թագաւորեաց ի Հոռոմ քաղաքի, այր իմաստուն յոյժ, որ առեալ էր զգուստր արքային Հոռոմայ ի կնութիւն, գեղեցիկ յոյժ եւ հաճոյ մարդկան աշաց հայելոյ, վասն որոյ եւ սիրեցեալ եղեւ աչս առն իւրոյ: Եւ յետ աւուրց յղացաւ կինն եւ ծնաւ որդի եւ կոչեաց զանուն նորա Դիոկղետիանոս, իսկ մանուկն Դիոկղետիանոս աճեալ եւ զարգացեալ եղեւ ցանկալի մարդկան:</p>

Ինչպէս նկատելի է, Թոխաթեցու թարգմանութիւնը համարուող տարբերակում փոխուած են մի քանի բառեր, որոնցից ուշագրաւ է յատկապէս թագաւորի անուան գրութեան ձեւը, որը նոյնացուած է լատիներէնի հետ՝ Diocletianus, քանի որ, ինչպէս նշուած է յիշատակարանում, թարգմա-

նուած է լատիներէնից: Ինչ վերաբերում է ենթավերնագրերին, դրանք միանգամայն տարբեր են, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ Թոխաթեցին ենթագլուխները մեկնաբանել ու վերնագրել է իր մտահոգացմամբ՝ այդպէս փորձելով նոր թարգմանութեան տպաւորութիւն ստեղծել: Համոզուելու համար համեմատենք.

<p>ՄՄ 5882</p>	<p>Փարիզի 307</p>
<p>Առին իմաստասէրքն զորդին թագաւորիւն յուսումն դպրութեան</p>	<p>Տայ կայսրն զորդի իւր եւ անձնէ եւթանքին դպրապետսն</p>

<p>Թագուհին խնդրէ արքայէն բերել զորդին առ նայ</p>	<p>Խնդիրք թագուհոյն ի կայսերէ, զի յդեալ կոչեսցէ զորդի իւր առ ինքն</p>
<p>Բերեալ զորդի թագաւորին, պատրէր զնա թագուհին ի տափանս շար ցանկութենէ եւ նա ոչ առնուր յանձն</p>	<p>Պատառել թագուհոյն զպատմունան իւր եւ ճշելն մեծափայն եւ թէ որպէս ըմբռնեալ եղեւ որդին թագաւորին</p>
<p>Առակ չար եւ վատ թագուհուն, որ ասաց արքային</p>	<p>Առաջին առակ թագուհուն, որով յաւժարեցոյց զկայսրն սպանանել զորդի իւր</p>
<p>Առակ չար կնոջ թագաւորին, զոր ասաց արքային, ապա եկն դպրապետն եւ ասաց այլ առակ</p>	<p>Առաջին անգամ տանելն զԴիոկղետիանոս ի սպանումն, եւ Պանցիլաս դպրապետն այսու առակաւք փրկեաց զնա ի մահուանէ</p>
<p>Առակ դպրապետին</p>	<p>Առակ յառաջին դպրապետի</p>
<p>Առակ չար թագուհուն</p>	<p>Երկրորդ առակ թագուհոյն վասն հովիւին, զոր սպան զվայրի խոզն</p>
<p>Առակ վաւաշոտ կնոջն, որ ասաց իմաստասէրն</p>	<p>Յերկրորդումն տանելն զորդին ի սպանումն եւ Լենթուլաս դպրապետն այսու առակաւք փրկեաց զնա</p>
<p>Առակ դպրապետին հինգերորդ, զոր ասաց ընդդէմ չար եւ վատ թագուհոյն</p>	<p>Առակ երրորդ դպրապետին վասն կնոջ միում, որ զայր իւր ետ գատապարտել ի մէջ հրապարակին</p>
<p>Առակ պիղծ կնոջն</p>	<p>Երրորդ առակ թագուհուն</p>
<p>Առակ կնոջ թագաւորին, զոր ասաց վասն անպարտ մանկանն</p>	<p>Երրորդ անգամ տանելն զորդին ի սպանումն եւ եղեւ փրկեալ ի Գաղոնէ դպրապետէ</p>
<p>Առակ դպրապետին</p>	<p>Առակ երրորդ դպրապետին վասն անծեղին, որ զրուցէր իբրեւ զմարդ եւ զոր ինչ տեսանէր ի տանն զամենայն պատմէր տան իւրոյ</p>
<p>Առակ չար կնոջն</p>	<p>Չորրորդ առակ թագուհոյ</p>
<p>Առակ պոռնիկ կնոջն թագաւորին, որ ասաց</p>	<p>Չորրորդ անգամ տանելն զորդի թագաւորին ի սպանումն</p>
<p>Առակ չորրորդ դպրապետին</p>	<p>Առակ չորրորդ դպրապետին վասն կնոջ միոյ, որ կամէր սիրել զքահանայն</p>
<p>Առակ կնոջն թագաւորի չար եւ պոռնիկ անզգամի ասացեալ</p>	<p>Հինգերորդ առակ թագուհոյն վասն Աւգաւաիանոսի կայսեր, որ կենդանոյն թաղեցաւ</p>
<p>Առակ դպրապետացն, զոր եկեալ ասացին առաջի կայսերն</p>	<p>Հինգերորդ անգամ տանելն զորդին ի մահ, որում դպրապետն Յովսէփոս այսպիսի առակաւք փրկեաց զնա</p>
<p>Առակ յոթերորդ դպրապետին, որ ասաց առաջի կայսեր</p>	<p>Առակ հինգերորդ դպրապետին վասն բժշկին Կալէնոսի, որ սպանաւ ի վարժապետէն իւրմէ եւ յետոյ զղջացեալ յոյժ աւաղեաց զմահ նորայ</p>
<p>Առակ չար կնոջ թագաւորին, որ ասաց կայսերն</p>	<p>Վեցերորդ առակ թագուհոյն յաղագս թագաւորի ումեմն անմաքրի եւ ջուր փողելոյ</p>

Առակ վեցերորդ կնոջն կատարեցաւ եւ տանէին ի կորուստ զորդին	Վեցերորդ անգամ տանելն զորդին ի մահ եւ փրկեաց զնա Կղէնուպատ դպրապետն
Առակ յոթերորդ, զոր ասաց դպիրն իմաստուն առաջի կայսեր	Առակ վեցերորդ դպրապետին վասն կնոջ ումեմն, որ զչորս զինաւորս բանիւ իւրով ի մահ մասնեաց
Առակ յութերորդ, զոր ասաց կինն անգգամ, առակ կայսերն	Նաւթներորդ առակ Յագուհոյն վասն Յագաւորի ումեմն, որուն էր զինուոր մի եւ յոյժ հաւատայր անձն նմայ, որում զՅագուհին նորա առեալ փախեաւ
Առակ կնոջ Յագաւորին, զոր ասաց շար ուսմամբն, զի սպանանել տայ զորդին	Նաւթն անգամ տանելն զորդին ի մահ, յորում Յովակիմ դպրապետն առակաւոր բանիւք իւրովք ապրեցոյցի մահուանէ
Առակ դպրապետին, զոր ասաց վասն շար կանանց	Նաւթներորդ առակ Ետին դպրապետին վասն զինաւորի միոյ, որ սակաւ մի արինն ետես ի մատն կնոջ իւրոյ եւ ի կսկծոյն մեռաւ
Ժողովելն Ը. իմաստասիրացն եւ բերել զորդին Յագաւորին	Գալն Դիոկղէտիանոսի առ հայր իւր
Խոսք եւ զրոյց որդոյ Յագաւորին	Մերկացուցանել զերիտասարդն ի կանացի գգեստէն
Առակ որդոյ Թագաւորի՞ն ասացեալ	Առակ որդոյ արքայի՞ն, զոր ասաց ի մէջ հանդիսի

Առաջին ենթավերնագրում Թոխաթեցին թագաւոր բառը դարձրել է կայսր, որն ինքնին խօսում է առաջին բնագրի վաղեմի լինելու մասին, երկրորդ ենթավերնագրում արքայի փոխարէն գործածել է կայսր տիտղոսը, իսկ չորրորդ «Առակ շար եւ վատ Յագուհոյն» ենթավերնագիրը փոխելով, հրաժարուել է թագուհուն վատաբանող ածականներից՝ նոյն մօտեցումը դրսևորելով նաև միևս ենթավերնագրերում: Հետաքրքրական է, որ վերջին ենթավերնագրում կայսեր փոխարէն նախընտրել է արքայ բառը, ըստ ամենայնի, հաւատարիմ է մնացել լատիներէն խմբագրութեանը՝

Երկու բնագրերի առաջին ենթագլուխների համեմատութիւնն ակնյայտ է դարձնում, որ Թոխաթեցին կատարել է նաև այլ խմբագրումներ՝ ասդի -աստի, ստոյգ-ըստոյգ, ցընա-ցնայ, յայսմանէ-այսմանէ, որդոյ-որդւոյ, յօժարութէամբ-յաւժարութէամբ, ասեն-ասացին, միայմօրէ-միամաւ-

րէ, ուսանելոյ-ուսուցանելոյ եւ այլն: Որոշ նախադասութիւններում փոխուած են բառերի հերթագայութիւնը կամ բառերը, ինչպէս օրինակ մի տացես կնոջ քո ունել իշխանութիւն —մի տացես ունել իշխանութիւն կնոջ քո, վարել կարասցէ զերկիրս — կարասցէ վարել զերկիրս, սկսաւ խորհել ընդ միտս - սկսաւ խորհել ի միտս իւր, ունիմ որդի մի միայնակ —ունիմ որդի մի միայնուկ եւ այլն:

Թոխաթեցին ուղղել է նաև մի շարք տառասխալներ՝ զհանճառ-զհանճար, իմաստանասէրսն-իմաստասէրսն, չորրորդ-չորրորդ, ժառանկ-ժառանգ եւ այլն՝ Նշենք նաև, որ երրորդ դպրապետի անունը թիւ 5882 ձեռագրում Նարագադոն է, իսկ Փարիզի 307-ում Գադոն, ի դէպ, Եօւսէփ անունը վերջինում առկայ է նաև զրութեան Ովսէփ ձեւով:

Երկու բնագրերի վերջին հատուածի համեմատութիւնը վերստին ապացուցում

է, որ թարգմանական տարբերութիւնները
չափազանց քիչ են: Համեմատենք.

ՄՄ 5882	Փարիզի 307
<p>Յետ այնորիկ ոչ յետ բազում աւուրց մեռաւ կայսրն Եւզիոկղիտիանոս թագաւորեաց ի տեղի նորա եւ զգպրապետսն մեծացոյց յոյժ եւ իմաս- տութեամբ վարեր զերկիր իւր եւ ամենեքեան գո- վէին զիմաստութիւն նորա եւ սիրէին զնա եւ բա- րի կենաւք կեցեալ հանգաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, ամեն:</p>	<p>Յետ այնորիկ ոչ բազում աւուրց մեռաւ կայսրն Եւզիոկղիտիանոս թագաւորեաց ի տեղի նորա եւ զգպրապետսն մեծացոյց յոյժ եւ իմաս- տութեամբ վարեր զերկիր իւր, եւ ամենեքին գո- վէին զիմաստութիւն նորա եւ սիրէին զնա, եւ բա- րի կենաւք կեցեալ հանգեաւ խաղաղութեամբ:</p>

Ինչպէս տեսնում ենք, առանձնապէս
աչքի ընկնող տարբերութիւններ չկան
նաեւ այս հատուածում, փոխուած են
միայն բառերը, իսկ վերջին նախադասու-
թիւնից հանուած է «ի Քրիստոս, ամեն»
արտայայտութիւնը: Քանի որ նորայայտ
բնագիրը չունի յիշատակարան, թարգման-
չի ու թարգմանութեան ժամանակի հարցը
մնում է անորոշ:

Այսպիսով, Մաշտոցեան Մատենադա-
րանի Ժէ դարի եւ Փարիզի ազգային գրա-
դարանի Ժէ դարի բնագրերի նախնական
համեմատական քննութեամբ պարզւում է,
որ «Պատմութիւն եօթն իմաստասիրաց»-ը
թարգմանուել է ոչ թէ Ժէ, այլ ԺԵ. կամ, որ
աւելի հաւանական է ԺԶ. դարում: Բուն
բնագրի գրեթէ անփոփոխ պահպանուածու-

թիւնը մեզ հիմք է տալիս ասելու, որ Թո-
խաթեցին ծանօթ է եղել այդ թարգմանու-
թեանն ու դրանից օգտուելով ստեղծել է իր
օրինակը:

Մեր կարծիքով, հայերէն առաջին
թարգմանութիւնն արուել է շատ աւելի
վաղ՝ ոչ թէ լատիներէնից, այլ, ամենայն
հաւանականութեամբ, արաբերէնից: Մնում
է պարզել, թէ արաբերէն ո՞ր բնագրից է
թարգմանուած թիւ 5882 ձեռագիրը, որը
հայերէն թարգմանութեան ժամանակը տա-
նում է մեկ կամ երկու դար ետ՝ Յակոբ Թո-
խաթեցուն դարձնելով ոչ թէ «Պատմութիւն
եօթն իմաստասիրաց»-ի առաջին թարգմա-
նիչը, այլ հին թարգմանութեան խմբագիրն
ու լատիներէն բնագրի հետ համեմատողը: